ԿԱՐԾԻՔ

ԳԵՎՈՐԳ ՄԱՐՏԻԿԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ «ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈԲԲԻՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐ» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ ԻԳ.00.02 «ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ և ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Եվրոպայի հայկական լոբբիի ուսումնասիրմանը ուղղված գիտական հետազոտությունները մեծ կարևորություն ունեն ինչպես Հայաստան - հայկական Սփյուռք, այնպես էլ՝ Հայաստանի Հանրապետություն - Եվրոպական միություն հարաբերությունների սերտացման տեսանկյունից:

Եվրոպայի և, առհասարակ, հայկական լոբբիի ուսումնասիրման գիտական անհրաժեշտությունն ու, հետևաբար, ընտրված թեմայի արդիականությունը էլ ավելի է մեծանում հատկապես կերպափոխվող աշխարհակարգի համատեքստում:

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության հարաբերությունների զարգացման համատեքստում ատենախոսության հեղինակին հաջողվել է վերլուծել և բացահայտել Եվրոպայի հայկական լոբբիի դերը և նշանակությունը, գործունեության հիմնական ուղղությունները և միտումները, ինչն է թույլ է տալիս եզրակացնելու, որ Գևորգ Մարտիկի Ղուկասյանի «Եվրոպայի հայկական լոբբին՝ որպես Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության հարաբերությունների զարգացման դերակատար» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը քաղաքական գիտության ինքնատիպ մոտեցումների հիման վրա կատարված ավարտուն գիտական աշխատանք է:

Հարկ ենք համարում նշել, որ հետազոտական աշխատանքը աչքի է ընկնում նաև անհրաժեշտ աղբյուրագիտական բազայով: Հեղինակը օգտվել է ուսումնասիրությանը վերաբերող մասնագիտական գրականությունից և համացանցից:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և առաջարկություններից ու օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ հեղինակը հիմնավորվել է թեմայի արդիականությունը, շարադրված են նրա նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության տեսական-մեթոդաբանական հիմքը, մագիստրոսական թեզի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Էթնիկ լոբբինգը, որպես քաղաքական գործընթացի դերակատար» գլխում տեսական վերլուծության է ենթարկվում լոբբինգի ինստիտուտը, բացահայտվում է էթնիկ լոբբինգի տեղն ու դերը դրանում, ինչպես նաև էթնիկ լոբբինգի հերաբերակցությունը քաղաքական գիտության այլ երևույթների հետ:

Առաջին գլխի առաջին՝ «Էթնիկ լոբբինգի ինստիտուտի էությունը» ենթագլխում լոբբինգի ընդհանրական ինստիտուտը, մասնավորապես լոբբինգի ենթատեսակները ներկայացնելուց հետո հեղինակը հատկորոշում է էթնիկ լոբբինգի էությունը, դրա գործունեության ոլորտը, գործունեության հիմնական ուղղություններն ու առանձնահատկությունները, ինչպես նաև տեխնոլոգիական գործիքակազմը:

Առաջին գլխի երկրորդ՝ «Էթնիկ լոբբինգի ինստիտուտը՝ որպես անդրազգային քաղաքական դերակատար. սփյուռքյան էլիտաների երկվության մարտահրավերը» ենթագլխում մանրամասնորեն ներկայացվում է էթնիկ լոբբինգի ինստիտուտը, դրա տեղն ու դերը սփյուռքի կյանքում: Հեղինակի կողմից էթնիկ լոբբինգը բնորոշվում է որպես սփյուռքի քաղաքական գործունեության հիմնական գործառնող, բացահայտվում է անդրազգային բազմաշերտ քաղաքական դերակատարումը, որը ենթադրում է հայրենիք-ընդունող պետություն երկճյուղ փոխհարաբերություններ: Ներկայացվում է այն նախադրյալների ու դրդապատճառների համախումբը, ինչը հնարավորություն է ստեղծում և սփյուռքին մղում իրականացնելու էթնիկ լոբբիստական գործողություններ: Հեղինակի եզրահանգմամբ, նման գործողությունների համար հիմնական նախադրյալը հյուրընկալ պետության ժողովրդավարական բնույթն է, իսկ դրդապատճառները հիմնված են լինում ազգային ինքնության, դրա ընկալման, մեկնաբանման և, ըստ այդմ, հայրենիքին օժանդակելու վրա: Հիմնավորվում և ներկայացվում է էթնիկ լոբբինգի

անդրազգային քաղաքական դերակատարությունը, ինչպես նաև էթնիկ լոբբինգի ներգրավվածությունը ինչպես գլոբալ, այնպես էլ գլոկալ և լոկալ հարթություններում: Էթնիկ լոբբինգի դերակատարությունը ներկայացված է հայրենիք-սփյուռք-ընդունող պետություն շղթայի ողջ բազմաշերտության մեջ: Ըստ այդմ հեղինակն առանձնաբար անդրադառնում է էթնիկ լոբբինգի ազդեցությանը ընդունող պետության վրա, էթնիկ լոբբինգի ազդեցությանը հայրենի պետության վրա, էթնիկ լոբբինգի քաղաքական վարքին՝ հայրենի պետությունների՝ էթնիկ հակամարտություններում ներառված լինելու պարագայում, սփյուռքյան ֆինանսական հոսքերին, հայրենի պետությունների ազդեցությանը սփյուռքյան կառույցների վրա և նույն կառույցների վրա ընդունող պետության ազդեցությանը: Տեսամեթոդաբանական առումով հեղինակը հիմնավորում է սփյուռքյան էլիտաների երկվության մարտահրավերն ու իբրև այդ մարտահրավերի լուծում առաջարկում հայրենի երկրի և ընդունող պետության քաղաքացիությամբ պայմանավորվող ինքնությունների կոնվերգենցիան:

Առաջին գլխի երրորդ՝ «Էթնիկ լոբբինգը՝ որպես քաղաքական արդիականացման բաղադրիչ և ՀՀ քաղաքական բնականոն արդիականացման դերակատար» գլխում հեղինակն առաջարկում է հայկական էթնիկ լոբբինգը դիտարկել իբրև Հայաստանի Հանրապետության քաղաքական արդիականացման, քաղաքակրթական չափման ապահովման, ազգային ինքնության և արդիական զարգացումների կոնվերգենցիա ապահովող դերակատար: Հեղինակի կողմից առաջարկվում է Հայաստանի զարգացմանն օժանդակելու՝ եվրոպահայ էթնիկ լոբբինգի քաղաքական առաջնահերթությունը վերաձևակերպել որպես օժանդակություն Հայաստանի բնականոն արդիականացմանը:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է «Հայկական էթնիկ լոբբինգը Եվրոպական միության անդամ երկրներում»: Դրա առաջին՝ «Եվրոպայի հայկական սփյուռքի ընդհանուր բնութագիրն ու քաղաքական աշխարհագրությունը» ենթագլխում ընդհանուր առմամբ ներկայացվում է Եվրոպայի հայկական սփյուռքը, որոշակիորեն քննարկվում է սփյուռք երևույթը, գիտության մեջ առկա որոշ սահմանումներ և վերջիններիս դասակարգման փորձերը: Արդյունքում եզրահանգվում է, որ Եվրոպայում

հայկական սփյուռքի համայնքները ենթակա չեն միարժեք բնորոշման, առավել ևս՝ դասակարգման: Այդ համայնքների միջև տարբերություններ կան՝ սկսած կազմավորման գործընթացից մինչև արդի սոցիալական, հասարակական կամ քաղաքական ակտիվություն: Երկրորդ գլխի երկրորդ՝ «Եվրոպայի հայկական լոբբիի քաղաքական գործունեության առաջնահերթությունները. «փափուկ ուժի» կիրառելիության գնահատում» ենթագլխում հեղինակը հատկորոշում Եվրոպայի հայկական լոբբիի ընդհանուր էությունը, նույնականացնում է հիմնական լոբբիստական կառույցները, դրանց գործունեության հիմնական ուղղությունները, տեխնոլորգիական առանձնահատկությունները և քաղաքական առաջնահերթությունները: Հեղինակը որոշակիորեն ուրվագծում է Եվրոպայում հայկական սփյուռքի ընդհանուր ակտիվությունը:

Հայկական տարաբնույթ կազմակերպությունների ցանցային դրսևորման այն պայմաններում, երբ որոշ կազմակերպություններ իրականացնում են ուղղակի դասական լոբբիստական գործունեություն, իսկ մյուսներն իրենց առօրյա գործունեությամբ ենթադրում են էթնիկ լոբբինգի ինստիտուտին առնչվող գործառութային և տեխնոլոգիական շերտեր, սակայն բնույթով, կանոնադրական նպատակներով ու առաքելությամբ լոբբիստական կազմակերպություններ չեն, հեղինակն առաջարկում է դրանք դիտել երկու՝ լոբբիստական և մերձլոբբիստական հարթության մեջ, ինչը, ըստ նրա, հնարավորություն կտա առավել համընդգրկուն կերպով բացահայտել Եվրոպայի հայկական կազմակերպությունների գործունեության լոբբիստական ողջ բազմաշերտությունը, անկախ այդ կազմակերպությունների կոնոնադրական նպատակներից:

Նույն ենթագլխում նաև ներկայացվում ՝ էթնիկ լոբբինգի և փափուկ ուժի տեսության տեսամեթոդաբանական համատեղելիության ոլորտները, հիմնավորվում է էթնիկ լոբբինգի գործընթացում փափուկ ուժի կիրառելիության հնարավորություններն ու նպատակահարմարությունը:

Երկրորդ գլխի երրորդ՝ «Ղարաբաղյան հիմնախնդիրը ՀՀ-ԵՄ հարաբերությունների քաղաքական զարգացման գործընթացում» ենթագլխում, ըստ ղեկավար կառույցների,

ինչպես նաև իր ամբողջության մեջ, վերլուծվում է Եվրոպական Միության քաղաքական վարքի էվոլյուցիան ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացում՝ ի դեմս Եվրոպական Խորհրդարանի բանաձևերի, Եվրոպական հանձնաժողովի, Եվրոպական Միության խորհրդի և Եվրոպական խորհրդի փաստաթղթերի ու որոշումների: Հատկապես մանրակրկիտ քննարկման է առնված Արևելյան գործընկերության գագաթաժողովների համատեղ հայտարարությունների՝ Արցախին վերաբերող հատվածները և ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված համաձայնագիրը՝ կրկին այնքանով, որքանով վերաբերում է Ղարաբաղյան հիմնախնդրին: Որոշակիորեն քննարկված է նաև Եվրոպական միության էներգետիկ հետաքրքրությունները Հարավային Կովկասում:

Ատենախոսության երրորդ գլուխում, որը վերնագրված է «Եվրոպայի հայկական լոբբիի գործունեության քաղաքական, ինստիտուցիոնալ և օրենսդրաիրավական հնարավորությունները», ատենախոսը Եվրոպայի հայկական էթնիկ լոբբինգի գործառնման հնարավորությունները փնտրում է երկու հիմնական մակարդակներում՝ քաղաքական և օրենսդրական: «Բազմամշակութայնության դերը էթնիկ լոբբինգի գործունեության երաշխավորման գործում» վերնագիրը կրող առաջին ենթագլխում հեղինակը առաջարկում է բացահայտել բազմամշակութայնության քաղաքականության դերը Եվրոպական միության անդամ երկրների և դրանցում ձևավորված սփյուռքի հետ հարաբերություններում, նախ որպես վերջինիս գործունեության գաղափարաքաղաքական հենք, ապա՝ սոցիալ-քաղաքական փոխակերպումների խաղային համակարգ: Եզրահանգվում է, որ բազմամշակութայնությունը պետության համար ունի կարգավորիչ և ապագան կառավարող գործառույթ: Դա թույլ է տալիս պահպանել պետության տարածքային ամբողջականությունը և ներպետական համագործակցության մշակույթը, ինչպես նաև բանակցային գործընթացներով կարգավորել առանձին խմբերի ու սուբյեկտների ինքնորոշման կամ անջատման փորձերը: Սակայն քաղաքական առավել համեստ նկրտումներ ունեցող խմբերի համար, որպիսիք ներգաղթյալներն են և սփյուռքի արդեն իսկ ձևավորված համայնքները, բազմամշակութայնությունը որոշակիորեն քաղաքական գործունեության

գաղափարաքաղաքական երաշխավորն է: Վերլուծության արդյունքում եզրակացվում է, որ Եվրոպայում էթնիկ լոբբինգի իրականացման գործընթացում բազմամշակութայնության դերը կարևորելու համատեքստում ակնհայտ է, որ ԵՄ-ն, լինելով բազմամշակութայնության, ներմիութենական համերաշխության ապահովման և զանազան էթնիկ խմբերի պահանջմունքների բավարարման ջատագով, այնուամենայնիվ, կառավարման համապատասխան մեխանիզմներ չի երաշխավորում էթնիկ լոբբինգի կառուցվածքագործառնական և նեովարքաբանական շրջանակներում: Այնուամենայնիվ, նկատի ունենալով նոր աշխարհակարգի անորոշություններն ու քաղաքական տուրբուլենտության օջախների անկանխատեսելիությունը, հեղինակը գտնում է, որ չպետք է անտեսել էթնիկ համայնքների պահանջմունքների բավարարման գործում բազմամշակութայնության ընձեռած հնարավորությունները, որոնք անուղղակիորեն կարող են նպաստել էթնիկ լոբբիստական գործունեության զարգացմանը և ներգաղթյալների բնականոն ինտեգրմանը:

Երրորդ գլխի երկրորդ՝ «Լոբբինգի ինստիտուտի գործունեության իրավական հիմքերը Եվրոպական միության երկրներում» ենթագլխում հեղինակը համախմբում է Եվրոպական միությունում (համաեվրոպական մակարդակ) լոբբինգի գործունեության ապահովման օրենսդրահիրավական և կառուցակարգային հնարավորությունները: Ըստ հեղինակի՝ ԵՄ-ում հիմնականում նկատի է առնված ոչ թե էթնիկ լոբբինգը, այլ լոբբինգի այլ տարատեսակներ, ինչպիսիք են տնտեսական և սոցիալական լոբբինգը: Ատենախոսը սա բացատրում նրանով, որ եվրոպական քաղաքական մշակույթը սփյուռքյան էթնիկ լոբբինգի ինստիտուտն առավելապես դիտում է շահերի խմբերի, այլ ոչ թե լոբբինգի համատեքստում: Հանգամանալի վերլուծվում է Եվրոպական խորհրդարանի, Եվրոպական հանձնաժողովի և ԵՄ խորհուրդի կողմից 2011 թ. միջհաստատութենական պայմանագրով ստեղծված «Թափանցիկության ռեգիստր» (Transparancy Register) հարթակը: Սույն ենթագլխում ատենախոսը որոշակիորեն անդրադառնում և խմբավորում է Եվրոպական Միության անդամ պետություններում լոբբիստական կարգավորումները:

Ենթագլխում քննարկված նյութի հիման վրա ատենախոսը եզրահանգում է, որ էթնիկ լոբբիստական խմբերի համար Եվրոպական միության՝ լոբբինգի վերաբերյալ

կարգավորումները օրենսդրահիրավական և ինստիտուցիոնալ խոչընդոտներ չեն ստեղծում: Առկա դժվարությունները պայմանավորված են բացառապես եվրոպական քաղաքական մշակույթի կողմից էթնիկ լոբբինգի՝ իբրև քաղաքական կատեգորիա ընկալմամբ կամ տարընկալմամբ: Այդուհանդերձ, հասարակական կազմակերպություններին տրվող արտոնությունները համայնքային բնույթի հասարակական կազմակերպություններին հնարավորություն են տալիս իրականացնելու էթնիկ լոբբիստական գործունեություն՝ օգտվելով առհասարակ լոբբինգի վերաբերյալ ԵՄ հնարավորություններից:

Երրորդ գլխի վերջին ենթավերնագիրը, որը վերնագրված է հետևյալ կերպ՝ «Եվրոպայի հայկական լոբբիի դերակատարությունը ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման գործում», հեղինակը պատասխանում է ատենախոսության առջև դրված հիմնական հարցերին, բացահայտում Եվրոպական Միության հիմնական ղեկավար կառույցների վրա Եվրոպայի հայկական լոբբիի ազդեցությունը, տալիս գործունեության ուղղությունների, քաղաքական առաջնահերթությունների և լոբբինգի տեխնոլոգիային վերաբերող ինչպես տեսական, այնպես էլ գործնական առաջարկություններ: Վեր են հանվում Եվրոպայի հայկական լոբբիի գործունեության որոշ թերություններ և խնդիրներ, դրանց լուծման ուղղությամբ տրվում են առաջարկներ: Եզրահանգվում է, որ Եվրոպայի հայկական լոբբին, ի դեմս Հայ դատի Եվրոպայի գրասենյակի, Եվրոպական միության ղեկավար կառույցներից միայն Եվրոպական խորհրդարանի վրա ազդեցություն ունի, իսկ ԵՄ իշխանության գործադիր մասի նկատմամբ ազդեցություն, որպես այդպիսին, չունի:

Թեկնածուական ատենախոսության եզրակացություններ բաժնում հեղինակը ներկայացրել է հետազոտության հիմնական եզրահանգումները, որոնք ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն և ներկայացրել է առաջարկություններ:

Հայցորդ Գ. Ղուկասյանի թեկնածուական ատենախոսությունը շարադրված է գիտական լեզվով, հետազոտության եզրահանգումները տրամաբանված են և բխում են ներածության մեջ դրված խնդիրներից և նպատակներից:

Բարձր գնահատելով գրախոսվող աշխատանքը և նկատի ունենալով թեմայի բարդությունն ու կարևորությունը՝ անհրաժեշտ ենք համարում կատարել

ատենախոսության առանձին հարցադրումներին վերաբերող հետևյալ դիտողությունները, որոնց շուրջ ատենախոսը կներկայացնի իր պարզաբանումները.

1. Մեր կարծիքով, հետազոտության գիտական տրամբանության շղթան ապահովելու տեսանկյունից ավելի ճիշտ կլիներ առաջին գլխում էթնիկ լոբբինգի ինստիտուտի էությունը բացահայտելուց հետո, առանձին ենթագլխով ներկայացնել նաև Եվրոպայի հայկական լոբբիի ընդհանուր նկարագիրը, եվրոպական պետությունների հայկական լոբբիի նմանություններն ու առանձնահատկությունները:
2. Չնայած այն հանգամանքին, որ ատենախոսության թեման վերաբերում է բացառապես Եվրոպայի հայկական լոբբիի ուսումնասիրմանը իսկ հեղինակը տարբեր ենթագլուխներում այս կամ այն կերպ անդրադարձել է հայկական այլ լոբբիներին, այդուհանդերձ, մեր կարծիքով հետազոտությունը կշահեր, եթե հեղինակը առանձին ենթագլխով անդրադարձ կատարեր և համեմատական անցկացներ Եվրոպայի և այլ հայկական լոբբիների գործունեության միջև:
3. Ատենախոսության երրորդ գլուխը տեսական ծանրաբեռնվածությունից թեթևացնելու համար, մեր կարծիքով ավելի ճիշտ կլիներ, որ 3.2՝ «Լոբբինգի ինստիտուտի գործունեության իրավական հիմքերը Եվրոպական միության երկրներում» ենթագլուխը ներկայացվեր ոչ թե երրորդ, այլ՝ առաջին գլխում:
4. Թեկնածուական ատենախոսության եզրակացությունում նշված երրորդ առաջարկությունը մեծ կարևորություն ունի թե Հայաստանի, թե հայկական լոբիստական կառույցների համար, սակայն, միևնույն ժամանակ, ցանկալի կլիներ, որ առաջարկությանը զուգահեռ հեղինակը նաև մատնանշեր թե Հայաստանի Հանրապետությունները ինչ մեխանիզմների միջոցով է նպաստելու էթնիկ լոբբիստական կառույցների զարգացմանը՝ չմիջամտելով այլ պետությունների գործերին:
5. 2.3՝ «Ղարաբաղյան հիմնախնդիրը ՀՀ-ԵՄ հարաբերությունների քաղաքական զարգացման գործընթացում» վերտառությամբ ենթագլխում հեղինակը համապարփակ ներկայացնում է ԵՎրոպայի հավաքական վերաբերմունքը ղարաբաղյան հակամարտությանը՝ չնշելով Եվրոպայի հայկական լոբբիի դերակատարումը ձևավորված վերաբերմունքի վրա: Միևնույն ժամանակ, ցանկալի կլիներ, որ հեղինակը ներկայացներ

հատկապես 2020թ. արցախյան պատերազմի ընթացքում և դարանից հետո եվրոպական եզակի պետությունների (օրինակ՝ Ֆրանսիա) վճռական և կոշտ վերաբերմունքը արդյո՞ք հայկական լոբբիի գործունեության արդյունք է, թե ոչ:

6. Աշխատանքը զերծ չէ նաև տեխնիկական թերություններից:

Հարկ ենք համարում նշել, որ ներկայացված դիտողությունները չեն նսեմացնում աշխատանքի արժեքը և հաշվի առնելով վերոշարադրյալը գտնում ենք, Գևորգ Մարտիկի Ղուկասյանի «Եվրոպայի հայկական լոբբին՝ որպես Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության հարաբերությունների զարգացման դերակատար» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է հայցվող՝ ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ
ԴՈՑԵՆՏ, Ք.Գ.Թ **Ա. Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Գ.Մ. Ղուկասյանի ատենախոսության պաշտոնական ընդդիմախոս, ք.գ.թ, դոցենտ Ա.Ռ. Հարությունյանի ստորագրությունը հաստատում եմ:

Հայ-ռուսական համալսարանի գիտական քարտուղար՝ բ.գ.թ. Ռ.Ս. Կասաբաբովա

13.06.2023թ.